Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլ ի հարցաշարերի պատասխաններ

12-րդ դասարան

1. Տխրահույզ, ներհուն երգեր գրող Գեղամ Սարյանի(Գեղամ Բաղդասարյան) անունը մեզ հայտնի է «Մարտիկի երգը» կարոտի բանաստեղծությամբ «Քրիզանթեմ» ծաղկի վերջին հառաչով, ծխախոտի հանդարտությամբ մխացող մարդու մտերմությամբ, ընկնող տերևի հոգու ցավով: Սարյանը ծնվել է Արևելքի շքեղ քաղաքում՝ Թավրիզում, հետո շատերի հետ ներգաղթել է մայր Հայաստան և մասնակցել նոր հայրենիքի հոգևոր և հասարակական կյանքին:
Սարյանը գրականությունէ մտել 1925-ին «Շիրակի հարսանիքը» գրքով, այնուհետև տարբեր թվականների հրատարակվել են նրա քնարական երգերի, բալլադների, պոեմների ժողովածուները: «Քրիզանթեմ» ժողովածուի համար արժանացել է ՀՍՀԽՀ պետական մրցանակի: Գրել է նաև արձակ երկեր, բայց փայլել է չափածոյում՝ միշտ հացատարիմ մնալով քնարերգուի իր բացառիկ խառնվածքին: Նրա բանաստեղծությունները համակված են ջերմ, մտերիկ, պայծառ տխրությամբ: Սարյանի բազմաթիվ բանաստեղծություններ երգվում են՝ չկորցնելով այժմեականությունը:
Սարյանի բանաստեղծությունները չունեն շքեղ պատկերներ, մեծադղորդ մակդիրներ, անակնկալ գյուտեր. դրանք բնական ապրումի ու հույզի արգասիք են, որ անցնում են ընթերցողին: «Մայրամուտի ժամանակ»բանաստեղծությունը հենց այդպիսին է. կարդում ես և վերապրում մեռնող օրվա արևի թուլությունն ու հողմեր ծուլությունը, զգում ես հրդեհված ամպերի և լռած դաշտերի մարող հևքը: Մի այլ աշխարհ գնացող արևը հանգչող մարդն է, հեռվում մնացած կապույտ սարը նրա աճյունն է, որից հետո անհուն խավար է մնում: Մնում է տխուր ու հուզիչ մի հուշ, որ մեզ հետ է լինելու յուրաքանչյուր մայրամուտի, երբ մենք որբանանք մեր սիրելիներից: Մայրամուտը անցնող կյանքն է, բայց արևը վաստակած է գնում այլ աշխարհ, գնում է՝ նորից գալու համար, և սա կյանքի անկանգ հոլովումն է, որ Իսահակյանը ձևակերպել է այսպես. Սիրո՛ւն մանկիկ, ես գնում եմ, դու գալիս ես այս աշխարհ…

2. «Ծմակուտի» քուրմը գրականություն մտավ տիրոջ իրավունքով, մտավ՝ մեկընդմիշտ հաստատելու իր Ծմակուտի սահմանները, վերհանելու մարդկայինի նախնական գեղեցկությունները, վերհանելու այնքան ինքնատիպ, որ դժվարանում ես գտնել համանման հերոս: Մաթևոսյանին իրավամբ համարել են«կյանքի գրող»(Ս. Աղաբաբյան), որ թափանցում, սուզվում է կյանքի խորքերը՝ մեկնաբանելով այն իր ամբողջության մեջ: Գրողի հերթական մարգարիտներց է «Աշնան արև» վիպակը, որը և բեմակացվել է, և էկրանավորվել, որովհետև այն կյանքի դասագիրք է, որ ոչ թե ընթերցվում է պարզապես, այլ դառնում է դասագիրք: Վիպակը միանգամից մտավ մեր կյանք, քանի որ Ծմակուտի միձոցով յուրովի ներկայացվում է մարդկության

պատմությունը։Վիպակի հերոսներից է Սիմոնը, որը «աշխատում, աշխատում աշխատում է սրա-նրա համար, իսկ վարձը՝ էգուց,եկող տարի,երբեք». սա առաջին ծանոթությունն է Սիմոնի հետ, բնութագիր՝ ըստ Աղունի. նա բարության, ներողամտության, անխոնջ աշխատասիրության համար վաստակել է «համայնական» անունը։ Սիմոնը, աշխատասեր, հանդուրժող, իր ընտանիքին նվիրված անկամ անձնավորություն է, որ, հասկանալով մարդկանց վիճակը, անգամ իր պարտքն է ամաչում պահանջել, դրա համար էլ Աղունը՝ ըմբոստ, արարող, պահանջատեր, գտնում է, որ «ամբողջ աշխարհը Սիմոնին պարտք է»։Որտեղ աշխատանք ու օգնություն, այնտեղ՝ Սիմոն, որտեղ պետք էր խոսել, պաշտպանվել, ընդդիմանալ, այնտեղ լռություն էր ու ծով համբերություն։ Կինն ամեն գնով Սիմոնին մղում է կամային քայլերի, բայց՝ ապարդյուն։«…Աշխարհը լիքը տղա՝ գնա Աղուիկ, Սիմոնից մարդ սարքիր»։ «Սիմոն», անունը Աղունի բառապաշարում անճարակության ու անկարողության հոմանիշ է։ Աղունը երբեք չզգաց նրա սերն ու ջերմությունը, բայց ծառայում էր ստրուկի հավատարմությամբ ու արքայադստեր արժանապատվությամբ։ Սիմոնն ամուսնացել էր անսեր, հորաքրոջ որդու միջնորդությամբ.«Դուրգար տղա է, աշխատող, խելոք, դե ինքն էլ արհեստավոր տղա է, փետի լավ գործ է անում…դե , Ծմակուտ, հորաքրոջդ մոտ կլինես, ես էնտեղ եմ, ինքն էլ խելոք , աշխատող տղա է»; Այո, սա է որբի ճակատագիրը, խորթ մայրը՝ դարպասեցին, այդպես էր ուզում։Բոլոր վիրավորանքները Սիմոնը տանում էր, ամաչելով, լռելով։ Աղունը հիշողությամբ ներկայացնում է իր ավերված կյանքը , մենք ճանաչում ենք Սիմոնին, ճանաչում ենք, բայց, ո՜վ զարմանք, չենք ատում, չենք դատապարտում, որովհետև մարդու նրա տեսակը միայն բարի խղճահարություն է առաջացնում։ Միայն մեկ անգամ է Աղունը սիրո պես մի բան զգացել,Զորագէս կայարանի լուսավոր խանութում։ Ամեն ինչի հետ համակերպվող Սիմոնը օրնիբուն միայն աշխատում էր, հոգնում, սխալ կլինի կարծել, թե նա չէր տեսնում կամ զգում, բայց անկամ ու լուռ էր։ Մի անգամ ընդվզեց ու ուրագով խփեց Աղունին, բայց հանկարծ սիրեց Սիմոնին, որովհետև նա սկսեց ընդդիմանալ։Տունը կամաց-կամաց կարգի էր գալիս Սիմոնի աշխատանքի շնորհիվ։ Մի անմեղ մեղանչման համար Աղունը նրան հանրային ամուսին է կոչում, վիրավորանքը վերածվում է սիրո ու ներման, և երբ Սոնան մեռնում է, ծաղրում է նրան՝ գնա՛, հանրային, սիրուհիդ մեռել է, տախտակավորիր։ Ամեն ինչ անցել է, կյանքի աշունն է, տառպանքով իրար կապված մարդիկ ներում են միմյանց, մի լուռ ու թաքուն սեր է խլրտում նրանց հոգում, ահա թե ինչու Սիմոնը դառնում է հանդուրժողականության, ներման և, ինչու ոչ, սիրո լուռ մարմնացում։

3. Վահագն Դավթյանը ծնվել է 1922-ին՝օգոստոսի 15-ին՝ Խաղողօրհեքի տոնին, երչատի վտակ Ոսկեգետակի ափին գտնվող Արաբկիր քաղաքում։«որս տարեկան եմ եղել, երբ թողել ենք իմ ծննդավայրը։Երազի պես եմ հիշում այդ գյուղաքաղաքը, բայց ինձ թվում է, թե նա աշխարհի ամենահրաշալի վայրն է։ Ես բանաստեղծությունների մի ամբողջ շարք եմ գրել այդ կիսաերազային աշխարհի մասին։ Ինչեր կտայի թեկուզ

մեկ անգամ իմ ծննդավայրը, մեր հին այգին, մեր հին տունը տեսնելու համար: Այն ինձ համար դարձել է երգի անհաս աշխարհ»: «Երևի չկա բանաստեղծ, որ ժամանակ առ ժամանակ չվերադառն դեպի իր մանկության ոսկե մայրցամաքը»: Անկարելի կարոտով է հիշում բանաստեղծը իր մանկությունը, մտքով վերադառնում է իր մանկության մայրցամաք, իսկ շարքը, որը այդ կարոտի օրհներգն է, կոչվում է «Ծննդավայր»:Այս շարքի բանաստեղծությունները ծնվել են կարոտից, կարոտախտից, տենդից, կարոտը դառնում է ալեկոծ ծով, բանաստեղծի քիմքում մնացել է հացի տաք բույրը, բոլոր գույների մեջ կապույտի մեջ թաթախված բարդին կգտնի, իր ոսկե առվի խոխոջը կլսի, եթե իրոք հրաշք լինի, այո, քիմքում մնացած մանկության հոտով կգտնի իր տունը: Բանաստեղծությունը հնչում է որպես աղոթք, այդ աղոթքը թևածում է բանաստեղծի հոգում, այն երբեք բարջրաջայն չի արտասանվում,ինչպես չի արտասանվում Տերունական աղոթքը, և մենք էի այդ արթուն կարոտի անաղարտ արահետներով գնում ենք հոտոտելով գտնելու բանաստեղծի հայրենական փոքրիկ տունը, որը երբեք քեզ չի գրկելու, ու բանաստեղծը մորմոքում է,«Ինչու այնպես եղավ, որ աշխարհում ես կարող եմ հիմա ամենայն տեղ գնալ, լոկ չեմ կարող գնալ հայրենի տուն», ու այդ գողացված մանկության հեքիաթը դեռ մնում է անավարտ…

4. 1942-ին «Սովետական գրականություն» ամսագրում լույս տեսան տակավին անհայտ մի բանաստեղծի երեք բանաստեղծությունները, որոնք կանխորոշեցին ապագա բանաստեղծի և՛ գրական անունը, և՛ գրական ճանապարհը, որը նա անցավ տառապալից տքնանքով: Մեր գրականության մեջ, ոչ ոք թերևս այնքան դժվարությամբ չի հարթել իր ճանապարհը, որքան Պարույր Սևակը՝ բանաստեղծը, գրաքննադատը, գրականագետը:

…Ես նոր մի պոետ, անհայտ տակավին,
Խոհերի անտես մակույկին նստած՝
Չգիտեմ արդյոք կլինի քամի՞,
Որ առաջ մղի իմ առագաստը:

Եվ եղավ այդ քամին, բացեց անտես մակույկի առագաստները, և սևակյան աշխարհը լցվեց սիրերգությամբ, հայրենասիրությամբ, մարդերգությամբ, խոհականությամբ, փիլիսոփայությամբ:
Սևակի պոեզիայում մարդը ներկայացվում է «ափի մեջ»՝ իր բոլոր առավելություններով ու թերություններով, իր հոգու բոլոր թրթիռներով, սիրո մեջ Սևակն անբռնելի և անըմբռնելի է, իսկ հայրենիքը նրա երդումն է, նրա հազարամյա ազգանունը, նրա ապրելու, ճիշտ ապրելու,«մայր հողի համար ավելորդ ծանրություն չլինելը»: Մաշտոցը, Նարեկացին, Կոմիտասն ու Թումանյանը նրա ոչ միայն ուսուցիչներն են, այլև մշտական ուղեկիցները:
«Մարդը ափի մեջ» (փառաբանություն մարդուն), «Ականջդ բեր, ասեմ» (բանաստեղծի փառաբանություն), «Նորից չեն սիրում, սիրում են կրկին» (սիրո փառաբանություն), «Անլռելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ»(հավատո հանգանակ): Մնացյալը՝ աշակերտը:

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլ ի հարցաշարերի գնահատման չափանիշներ

12-րդ դասարան

1-ին հարցի ենթահարցեր՝ 1 - 2 մ., 2 - 3 մ.
2-րդ հարցի ենթահարցեր՝ 1 - 3 մ., 2 - 2 մ.
3-րդ հարց՝ 5 մ.
4-րդ հարցի ենթահարցեր՝ 1 - 1 մ., 2 - 4 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան